# 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ծրագրի անվանումը

*«Գրադարանային ծառայություններ»*

2. Ծրագրի դասիչը

Բաժին **08**, խումբ **2** , դաս **1**

3. Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքի գրադարանների պահպանման միջոցով բնակչության բոլոր խավերին ապահովել գեղարվեստական, մասնագիտական և տեխնիկական գրականությամբ: Գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթական համակարգի գործունեության օժանդակում:

4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Ավելացնել գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը՝ բարձրացնելով սպասարկման որակը, թարմացնել և արդիականացնել գրադարանային ֆոնդը:

5. Ծրագրի բյուջեն

2021 թականին նախատեսվում է **52529,0 հազ. դրամ**

6. Ծրագրի բացվածքը

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *Ընդամենը ծախսեր* | | *52529.0* | *52529.0* | *0,0* |
| -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 1200,0 | 1200,0 | 0,0 |
| -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 49829.0 | 49829.0 | 0.0 |
| -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 1500.0 | 1500.0 | 0.0 |

7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01.01.2021թ- 30.12.2021թ

8. Տեղեկանք հիմնավորում

2021թ բյուջետային տարվա ընթացքում ծախսերը յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են նվազագույն չափով: Աշխատողների 43 հաստիքային միավորների աշխատավարձի սուբսիդավորման համար նախատեսվել է 49228.49 հազ. դրամ և կոմունալ և պահպանման ծախսերի համար 1500.0 հազ.դրամ: Նախատեսվում է մեկ գրադարանի համար տարածքի վարձակալություն 1200.0 հազ. դրամով, որի վերաբերյալ կա համայնքի ավագանու համապատասխան որոշում:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ծրագրի անվանումը

*«Թանգարաններ և ցուցասրահներ»*

2. Ծրագրի դասիչը

Բաժին **08**, խումբ **2** , դաս **2**

3. Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքի բնակչության բոլոր խավերին, համայնք այցելած զբոսաշրջիկներին և հյուրերին պատմամշակութային և գրական ժառանգության հետ ծանոթացում:

4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Ավելացնել համայնք այցելած զբոսաշրջիկների և հյուրերի թիվը, դրա արդյունքում համայնքը դարձնել ավելի գրավիչ և ճանաչված արտերկրում:

5. Ծրագրի բյուջեն

2021 թվականի համար ծրագրի բյուջեն կազմում է **95293,7հազ դրամ**

6. Ծրագրի բացվածքը

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | *այդ թվում՝* | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *Ընդամենը ծախսեր* | | *95293.7* | *95293.7* | *0,0* |
| -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 82145.7 | 82145.7 | 0.0 |

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 13148.0 | 13148.0 | 0.0 |

**7. <u>Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը</u>**

01.01.2021թ. - 30.12.2021թ.

**8. <u>Տեղեկանք հիմնավորում</u>**

2021թ. բյուջետային տարվա ընթացքում ծախսերը յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են նվազագույն չափով: Ոլորտն ունի թվով 5 թանգարան և գրոսայգիների խնդիրներով զբաղվող մեկ համայնքային կազմակերպություն: Նախատեսված սուբսիդիայի գումարները ներառում են կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը՝ 76 հաստիքային միավորի համար 82145.7 հազ.դրամի չափով և պահպանման ու էքսպոնատների վարձակալության ծախսերը մոտ 7.0 մլն. դրամի չափով, ինչպես նաև համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի գումարները 6075.55 հազ. դրամի չափով, որը կուղղվի կազմակերպությունների զբաղեցրած տարածքի ընթացիկ նորոգման, գույքի ձեռք բերման և այլ անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորմանը, որոնք ըստ կատարած գանձումների կներկայացվեն կազմակերպությունների կողմից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

---

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

**1. <u>Ծրագրի անվանումը</u>**

***«Համայնքային մշակութային կազմակերպությունների պահպանում»***

**2. <u>Ծրագրի դասիչը</u>**

Բաժին **08**, խումբ **2**, դաս **3**

**3. <u>Ծրագրի իրականացման նպատակը</u>**

Համայնքում մինչև 15 տարեկան դպրոցականների շրջանում զարգացնել հոգևոր, երաժշտական, մշակութային դաստիարակությունը՝ գեղագիտական, ազգային հոգևոր մշակույթի ուսուցման, տաղանդավոր երեխաների հայտնաբերման համար:

4. <u>Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է</u>

Մինչև 15 տարեկան դպրոցականների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում մշակութային ստեղծագործական ունակությունների զարգացում, հոգևոր, գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթամշակութային, դաստիարակչական ծրագրերի իրականացում:

5. **<u>Ծրագրի բյուջեն</u>**

2021 թվականի համար նախատեսվում է՝ **<u>518736,9 հազ. դրամի</u>**

6. **<u>Ծրագրի բացվածքը</u>**

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | *այդ թվում՝* | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ***<u>Ընդամենը ծախսեր</u>*** | | ***518736.9*** | ***518736.9*** | ***0.0*** |
| -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 474685.6 | 474685.6 | 0.0 |
| -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 44051.3 | 44051.3 | 0.0 |

7. **<u>Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը</u>**

01.01.2021թ.- 30.12.2021թ.

8. **<u>Տեղեկանք հիմնավորում</u>**

2021թ. բյուջետային տարվա ընթացքում ծախսերը յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են նվազագույն չափով: Ոլորտի ծախսերը նախատեսվել են թվով 5 երաժշտական դպրոցի, մեկ արվեստի դպրոցի, մեկ պարարվեստի դպրոցի, մանկապատանեկան արվեստի պալատի պահպանման համար, որոնցում արտադասարանական դաստիարակությունեն ստանալու 1894 սան: Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված տարիֆիկացիաները, երեխաների և խմբերի քանակները, որոնց համար կազմակերպվում է արտադպրոցական կրթություն: Համայնքային ենթակայությամբ գործում են նաև մեկ տիկնիկային թատրոն, երիտասարդական պալատի և մեկ փողային նվագախումբ:

Նախատեսված սուբսիդիայի գումարներց զատ թվով 5 երաժշտական և մեկ արվեստի դպրոցում պետական պատվերով նախատեսվում է իրականացնել ժողովրդական նվագարանների ուսուցման արտադպրոցական դասընթացներ, որի շրջանակներում ակնկալվում է շուրջ 65111.7 հազ. դրամի ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:

Ծրագրի և պետական պատվերի համար հատկացված միջոցները նախատեսվում է բաշխել հետևյալ ուղղություններով՝ աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 537237.3 հազ. դրամ 433 աշխատակց համար, պահպանման ծախսեր՝ 44051.25 հազ. դրամ, որը կներառի համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը: Պահպանման ծախսերի համար հատկացված միջոցները կուղղվեն կազմակերպությունների զբաղեցրած տարածքների կոմունալ վարձերի վճարմանը, ընթացիկ նորոգմանը, գույքի ձեռքբերմանը, սաների անհատական պարապմունքների համար ուսուցիչներին հավելավճարների վճարմանը և այլ անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորմանը: Հատկացումները կիրականացվեն ըստ կատարած գանձումների կազմակերպությունների կողմից ներկայացված առանձին հայտերի հիման վրա:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

---

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. **Ծրագրի անվանումը**
***«Հուշարձանների վերանորոգում և պահպանում»***

2. **Ծրագրի դասիչը**
Բաժին **08**, խումբ **2**, դաս **7**

3. **Ծրագրի իրականացման նպատակը**
Ստեղծել բարեկարգ տարածքներ մշակութային հանգստի համար, վերանորոգել և բարեկարգել մշակութային շինությունները և հարակից տարածքները:

**4.Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**
Արդյունքում ապագա սերունդներին փոխանցելու համար կապահովվի քաղաքի պատմամշակութային ժառանգության պատշաճ պահպանումը և դրանք կունենան ավելի ներկայանալի տեսք համայնքի հյուրերի և զբոսաշրջիկների համար:

5. **Ծրագրի բյուջեն**
Նշված ուղղությամբ 2021 թվականի համար նախատեսվում է **25790,0 հազ դրամ**

6. Ծրագրի բացվածքը

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *Ընդամենը ծախսեր* | | ***25790,0*** | ***3950,0*** | ***21840,0*** |
| -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 2500.0 | 2500.0 | 0.0 |
| -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 1450.0 | 1450.0 | 0.0 |
| - Շենքերի և շինությունների շինարարություն | 5112 | 20000.0 | 0.0 | 20000.0 |
| - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 1840.0 | 0.0 | 1840.0 |

7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

- 01.01.2021թ. - 31.12.2021թ.
- Շենքերի և շինությունների շինարարություն - 01.04.2021թ. - 30.10.2021թ.
- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում - 01.04.2021թ. - 30.10.2021թ.

8. Տեղեկանք հիմնավորում

Լայն թափով ընթացող Կումայրի պատմական կենտրոնի վերականգնման աշխատանքներին զուգահեռ 2021թ. նախատեսվում է պատմամշակութային հուշարձանները և դրանց տարածքները բերել պատշաճ տեսքի, ինչպես նաև քաղաքի պատմամշակութային տարածքները առավել գրավիչ և հարմարավետ դարձնելու նպատակով նախատեսվում է կատարել հուշարձանների արտաքին տեսքի բարելավման աշխատանքներ: Շենքերի և շինությունների շինարարություն հոդվածով նախատեսված միջոցները կուղղվեն 2020 թվականի պատերազմում զոհված զինծառայողների հիշատակին նվիրված նոր հուշարձանի և դրան հարակից տարածքի կառուցման աշխատանքների իրականացմանը: Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով նախատեսվել են միջոցներ հուշարձանների հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների համար:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ծրագրի անվանումը

*<<Աջակցություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին>>*

2. Ծրագրի դասիչը
Բաժին 08, խումբ 4, դաս 2

3. Ծրագրի իրականացման նպատակը
Աջակցել տարբեր ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացմանն և հզորացմանը, համաֆինանսավորել համայնքային զարգացմանը միտված ծրագրերը :

**4.Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**
Արդյունքում ակնկալվում է ունենալ ավելի հզոր հասարակական կառույցներ, որոնց գործունեությունը ուղղված կլինի քաղաքացիական հասարակության կայացմանը և դերի բարձրացմանը:

5. Ծրագրի բյուջեն
Նշված ուղղությամբ 2021 թվականի համար նախատեսվում է **15000.0 հազ դրամ**

6. Ծրագրի բացվածքը

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Ընդամենը ծախսեր** | | **15000,0** | **15000,0** | **0,0** |
| -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 15000,0 | 15000,0 | 0,0 |

7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01.01.2021թ. - 31.12.2021թ.

8. Տեղեկանք հիմնավորում
Միջոցների հատկացումները համայնքային բյուջեից կիրականացվեն ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրերի հիման վրա: Նախատեսված գումարից 2000.0 հազ.դրամը պլանավորվում է ուղղել համայնքում տարբեր տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող իրավունքների պաշտպանության ու իրազեկման ծրագրերի համաֆինանսավորմանը, 2000.0 հազ. դրամ կուղղվի մշակութային ծրագրերի ֆինանսավորմանը, 4400.0 հազ. դրամ կուղղվի համայնքի տնտեսական կարողությունների և տուրիզմի զարգացմանը միտված ծրագրերի իրականացմանը, իսկ 6600.0 հազ. դրամը նախատեսվում է հատկացնել երիտասարդական հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված տարաբնույթ ծրագրերի ֆինանսավորմանը: Պետք է նշել որ երիտասարդական

ծրագրերի համար միջոցների հատկացման վերաբերյալ առաջարկները կներկայացվեն ավագանու քննարկմանը Գյումրու համայնքապետին կից երիտասարդական խորհրդի կողմից տրված կարծիքի առկայությամբ:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

*«Մշակութային միջոցառումների իրականացում»*

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին **08**, խումբ **6**, դաս **1**

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի բնակիչներին, հատկապես երիտասարդությանը մասնակից դարձնել մշակութային կյանքին:

**4.Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Համայնքային մշակութային միջոցառումների և տոնակատարությունների կազմակերպում, որոնց արդյունքում ժողովրդին, հատկապես երիտասարդությանը և համայնքի հյուրերին կմատուցվեն բարձրաճաշակ մշակութային ծառայություններ:

**5. Ծրագրի բյուջեն**

Նշված ուղղությամբ 2021թ. համար նախատեսվում է **26290,0 հազ դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | *այդ թվում՝* | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Ընդամենը ծախսեր** | | **26290.0** | **26290.0** | **0,0** |
| -Այլ ընթացիկ ծախսեր | 4861 | 26290.0 | 26290.0 | 0,0 |

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

- 01.01.2021թ. - 31.12.2021թ.

8. Տեղեկանք հիմնավորում

Համայնքային միջոցառումների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը և դրանց իրականացման համար նախատեսված գումարների չափը ներկայացվում է կից հավելվածով: Կախված միջոցառումների մասշտաբներից և նշանակությունից համայնքի ավագանու հաստատմանը կներկայացվեն միջոցառումների անցկացման ծախսերի նախահաշիվները: Բյուջեով հաստատված մյուս միջոցառումների անցկացումը կիրականացվի համայնքի ղեկավարի կողմից հաստատված նախահաշիվների հիման վրա:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

*<<Նախադպրոցական ուսումնական հաստատությունների պահպանում>>*

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին **09**, խումբ **1** , դաս **1**

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի 1- 6 տարեկան երեխաների ցերեկային խնամք մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումը, առողջության ամրապնդումը, ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև տարրական դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Համայնքի 1-6 տարեկան երեխաների ընդգրկում համայնքում գործող 24 մանկապարտեզներում, երեխա-հաճախումների թվի ավելացում, նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում երեխաների ընդհանուր զարգացման ապահովում:

**5. Ծրագրի բյուջեն**

2021թվականի համար այս ուղղությամբ նախատեսված է **701858,6 հազ դրամ:**

6. <u>Ծրագրի բացվածքը</u>

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ***Ընդամենը ծախսեր*** | | ***701858.6*** | ***701858.6*** | ***0,0*** |
| -Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 701858.6 | 701858.6 | 0,0 |

7. <u>Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը</u>

07. 01. 2021թ. -28.12.2021թ.

8. <u>Տեղեկանք հիմնավորում</u>

Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված տարիֆիկացիաները և խմբերի քանակները: 2021թ. բյուջետային տարվա ընթացքում ծախսերը օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր ուղղությամբ ներկայացված են նվազագույն չափով: Ոլորտի համայնքային կազմակերպությունները 24-ն են: Մանկապարտեզ հաճախող երեխաների ցուցակային թիվը, ըստ ներկայացված փաստաթղթերի կազմում է 2689 երեխա: Նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է կազմակերպությունների աշխատողների համար նախատեսված 513994.8 հազ. դրամ աշխատավարձը, ինչպես նաև համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներից 187863.8 հազ. դրամի չափով գումար, որը կուղղվի զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի վճարման և մանկապարտեզ հաճախող երեխաների սննդի ծեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը, համապատասխանաբար՝ 40938.8 հազ. դրամի և 146925.0 հազ. դրամի չափերով: Ծախսերը պլանավորվել են մանկապարտեզի սաների ութսունչորս տոկոս միջին հաճախելիության սահմաններում:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. <u>Ծրագրի անվանումը</u>

***«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համաֆինանսավորում և սոցիալապես անապահով երեխաների վարձի փոխհատուցում»***

2. <u>Ծրագրի դասիչը</u>

Բաժին 09, խումբ 6 , դաս 1

3. Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքի 1- 6 տարեկան սոցիալապես անապահով և հատուկ արտոնություններից օգտվող երեխաների ցերեկային խնամք համայնքապատկան և միջազգային կազմակերպությունների կողմից համաֆինանսավորվող մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց վարձավճարների և պահպանման ծախսերի փոխհատուցումը:

4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Համայնքի 1-6 տարեկան սոցիալապես անապահով երեխաների ընդգրկում գործող համայնքապատկան և միջազգային կազմակերպությունների կողմից համաֆինանսավորվող մանկապարտեզներում, նրանց թվի ավելացում, որը կնպաստի անապահով ընտանիքների երեխաների բնականոն զարգացման ապահովմանը, անկախ սոցիալական վիճակից:

5. Ծրագրի բյուջեն

2021 թվականի համար այս ուղղությամբ նախատեսված է **16245.8 հազ դրամ:**

6. Ծրագրի բացվածքը

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ***Ընդամենը ծախսեր*** | | ***16245.8*** | ***16245.8*** | *0.0* |
| -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 16245.8 | 16245.8 | 0.0 |

7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01. 02.2021թ. - 28.12.2021.թ

8. Տեղեկանք հիմնավորում

Ծրագրի իրականացումը կրում է շարունակական բնույթ: Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել 2020թ. փաստացի ծախսերը: 2021թ. նախատեսվում է ավագանու սահմանած արտոնությունների փաթեթի հիման վրա սոցիալապես անապահով և հատուկ արտոնություններից օգտվող մոտ 650 երեխաների ընդգրկել ծրագրում, ապահովելով սոցիալապես անապահով երեխաների առավել լայն շրջանակի ինտեգրումը հասարակությանը: Ծրագրով նախատեսվում է նաև համայնքի ստանձնած պարտավորությունների շրջանակներում 8445.8 հազար դրամի չափով՝ 100 տոկոսով ֆինանսավորել Մուշ թաղամասում գործող Մուշ զարգացման կենտրոնի գործունեությունը, որը հիշյալ թաղամասում մանկահասակ երեխաների ցերեկային

խնամք իրականացնող միակ հաստատությունն է և համաֆինանսավորում է Ուորլդ Վիժըն Հայաստան կազմակերպության կողմից: Ծրագրի հատկացումներում կարող են կատարվել փոփոխություններ կախված արտոնություններից օգտվող երեխաների թվից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

***«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցման համաֆինանսավորում, ընթացիկ վերանորոգում, գույքի ձեռք բերում և պահպանում»***

**2. Ծրագրի դասիչը**

Բաժին **09**, խումբ **6**, դաս **1**

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Համայնքի մանկապարտեզներ հաճախող երեխաների համար ապահովել օրենքով սահմանված նորմերին համապատասխան բարենպաստ պայմաններ:

**4. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Համայնքում գործող թվով քանչորս մանկապարտեզները կապահովվեն հաստատություններ հաճախող երեխաների կրթական գործընթացի կազմակերպման համար պատշաճ պայմաններով:

**5. Ծրագրի բյուջեն**

2021թ. համար այս ուղղությամբ նախատեսված է **35326,2 հազ դրամ:**

**6. Ծրագրի բացվածքը**

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | *այդ թվում՝* | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ***Ընդամենը ծախսեր*** | | ***35326.2*** | ***35326.2*** | ***0,0*** |
| -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 35326.2 | 35326.2 | 0,0 |

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

10.01.2021թ -25.12.2021թ

8. Տեղեկանք հիմնավորում

Նախատեսվում է 2021 թվականի համայնքի բյուջեից 25346.2 հազ. դրամի չափով ֆինանսավորել մանկապարտեզների զբաղեցրած տարածքների ընթացիկ նորոգման, գույքի, տնտեսական ապրանքների ձեռք բերման և պահպանման համար անհրաժեշտ այլ ծախսերը: Ֆինանսավորումը կիրականացվի մանկապարտեզների կարիքների հիման վրա, նրանց կողմից ներկայացրած հայտերով: Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կառուցվող թվով երկու նախակրթարանների շինարարական աշխատանքների իրականացման նպատակով համայնքը պարտավորվել է կատարել 10 տոկոսի ներդրում, որի առաջին չափաբաժինը փոխանցվել է 2020 թվականին, իսկ 2021 թվականին կկատարի 9980.0 հազ դրամի չափով ներդրում: Աշխատանքների ավարտը նախատեսվում է 2021թվականին:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ծրագրի անվանումը

***«Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում »***

2. Ծրագրի դասիչը

Բաժին **10**, խումբ **3**, դաս **1**

3. Ծրագրի իրականացման նպատակը

Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում:

5. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Հասարակության մեջ սոցիալական լարվածության մեղմում, անապահով ընտանիքների սոցիալական աջակցությանն ուղղված առավել նպատակային և հասցեական հատկացումների կատարում, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման գործում տեղական ինքնակառավարման մարմինների դերի մեծացում, սոցիալապես անապահով խավերի համար լրացուցիչ սպասարկման և ծառայությունների մատուցում:

5. <u>Ծրագրի բյուջեն՝</u>

2021 թվականի համար նախատեսվում է **3841,4 հազ. դրամ**:

6. <u>Ծրագրի բացվածքը</u>

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ***Ընդամենը ծախսեր*** | | ***3841.4*** | ***3841.4*** | ***0,0*** |
| -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 3841.4 | 3841.4 | 0.0 |

7. <u>Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը</u>

01.01.2021թ. – 31.12.2021թ.

8. <u>Տեղեկանք հիմնավորում</u>

Ծրագրի բյուջեի 2021 թվականին համար նախատեսվում է փաստաթղթերի հիման վրա սոցիալապես անապահով ճանաչված և (կամ) հարազատ չունեցող անձանց համար կազմակերպել հուղարկավորության ծառայություններ համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Հուղարկավորության ծառայությունները մատուցվելու են համայնքի հարյուր տոկոս մասնակցությամբ հիմնադրված «Հավերժ հիշատակ» ՓԲԸ-ի կողմից 54,9 հազ. դրամ բարձրացված նախահաշվային գնի սահմաններում, միջինը 70 հոգու համար:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. <u>Ծրագրի անվանումը</u>

*<<Աջակցություն ռազմական գործողությունների մասնակիցներին և նրանց ընտանիքներին* >>

2. <u>Ծրագրի դասիչը</u>

Բաժին **10**, խումբ **4** , դաս **1**

3. <u>Ծրագրի իրականացման նպատակը</u>

Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին շարունակական ծրագրերի միջոցով արցախյան գոյամարտի, Հայրենական Մեծ և 2020 թվականի արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին և նրանց ընտանիքի անդամներին տոնական օրերին աջակցություն:

4. <u>Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է</u>

Հասարակության մեջ սոցիալական լարվածության մեղմում, ազատամարտիկներին և հայրենական պատերազմի վետերաններին, ինչպես նաև նրանց ընտանիքներին դրամական օգնության տրամադրում:

5. <u>Ծրագրի բյուջեն</u>

2021 թ. համար նախատեսվում է՝ **40650,0** հազար դրամ:

6. <u>Ծրագրի բացվածքը</u>

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ***Ընդամենը ծախսեր*** | | ***40650.0*** | ***40650.0*** | ***0,0*** |
| -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 40650.0 | 40650.0 | 0,0 |

7. <u>Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը</u>

01.05.2021թ. – 28.12.2021թ.

8. <u>Տեղեկանք հիմնավորում</u>

2021 թվականի համար օգնության գումարները պլանավորվել են 2020 թվականի կատարված փաստացի ծախսերի և 2020 թվականի պատերազմական գործողությունների ընթացքում զոհված ու հաշմանդամ դարձած զինծառայողների թվի հիմման վրա, իսկ դրանց հատկացումները իրականացվելու են հիշյալ խմբերի հաշվառում օրականացնող տարածքային զինկոմիսարիատի տրամադրած ցուցակների հիմաև վրա՝ մայիսյան և ամանորյա տոներին ընդառաջ:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

---

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. <u>Ծրագրի անվանումը</u>

*<<Բնակարանային ապահովում>>*

2. <u>Ծրագրի դասիչը</u>

Բաժին **10**, խումբ **6** , **դաս 1**

3. <u>Ծրագրի իրականացման նպատակը</u>

Ծրագրի շարունակականության ապահովման միջոցով յուրաքանչյուր տարվա համար՝ նախկինում օտարման ծրագրերի շահառու հանդիսացող անձանց կողմից վարձակալած բնակարանների վարձի փոխհատուցում, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին և միայնակ թոշակառուներին բնակարանով ապահովում:

4. **Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Հասարակության մեջ սոցիալական լարվածության մեղմում, համայնքի ստանձնած պարտավորությունների կատարում, համայնքի բնակչության խոցելի խավերի նկատմամբ:

5. **Ծրագրի բյուջեն**

2021թ. համար նախատեսվում է հատկացնել՝ **1260.0 հազ. դրամ**

6. **Ծրագրի բացվածքը**

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ***Ընդամենը ծախսեր*** | | ***1260,0*** | ***1260,0*** | ***0,0*** |
| - Բնակարանային նպաստներ բյուջեից | 4728 | 1260,0 | 1260,0 | 0,0 |

7. **Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.01.2021թ. – 30.12.2021թ.

8. **Տեղեկանք հիմնավորում**

Բնակարանների վարձակալության վճարի փոխհատուցումները տրամադրվում են այն ընտանիքներին, որոնք տարբեր ծրագրերի իրականացման հետևանքով ազատել են իրենց ժամանակավոր կացարաններով ծանրաբեռնված հողամասերը, իսկ համայնքը ստանձնել է նրանց կողմից վարձակալած բնակարանների վարձի փոխհատուցման պարտավորություն մինչև պետական ծրագրերի շրջանակներում հիշյալ ընտանիքներին բնակարաններով ապահովումը, որի համար էլ նախկինում կնքվել են համապատասխան պայմանագրեր: Ծրագրի այս բաղադրիչի շահառու են հանդիսանում թվով չորս ընտանիքներ, որոնց տարեկան կտրվածքով վճարվում է 1260.0 հազ. դրամ փոխհատուցում:

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ծրագրի անվանումը

*<<Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին>>*

2. Ծրագրի դասիչը

Բաժին **10**, խումբ **7**, դաս **1**

3. Ծրագրի իրականացման նպատակը

Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, գրենական պիտույքների տրամադրում, կենցաղ սպասարկման ծառայությունների մատուցում և դրամական նպաստների վճարում: Երեխաներին, միայնակ տարեցներին և սոցիալապես անապահով այլ խավերին տոնական օրերին աջակցություն:

6. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Հասարակության մեջ սոցիալական լարվածության մեղմում, անապահով ընտանիքների սոցիալական աջակցությանն ուղղված առավել նպատակային և հասցեական հատկացումների կատարում, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման գործում տեղական ինքնակառավարման մարմինների դերի մեծացում, սոցիալապես անապահով խավերի համար լրացուցիչ սպասարկման և այլ ծառայությունների մատուցման իրականացում:

5. Ծրագրի բյուջեն

2021թվականի համար նախատեսվում է՝ **35100.0 հազ. դրամ**

6. Ծրագրի բացվածքը

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *Ընդամենը ծախսեր* | | *35100,0* | *35100,0* | *0,0* |
| -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 15600.0 | 15600.0 | 0.0 |
| - Գրասենյակային նյութեր | 4261 | 3500.0 | 3500.0 | 0.0 |
| -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 14500.0 | 14500.0 | 0.0 |
| -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 1500.0 | 1500.0 | 0.0 |

7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01.01.2021թ. – 28.12.2021թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Ծրագիրը համարվում է շարունակական, յուրաքանչյուր բյուջետային տարի նախատեսվում է գումար հատկացնել՝ թվով 812 սոցիալապես անապահով անձանց համար ամսական չորս անգամ բաղնիքի և մեկ անգամ վարսահարդարման ծառայություններից օգտվելու համար: Ուսումնական տարվա կապակցությամբ գրենական պիտույքների ձեռք բերման և սոցիալապես անապահով ընտանիքների թվով 1000 երեխաներին տրամադրման համար: 2021թ. համայնքի բյուջեում միջոցներ են նախատեսվել նաև սոցիալապես անապահով անձանց դրամական օգնությունների հատկացման համար: Դրամական օգնությունների տրամադրման համար շահառուների ընտրությունը կատարվում է համայնքապետարան ներկայացված դիմումների հիման վրա, իսկ շահառուների վերջնական ցուցակը և յուրաքանչյուրին հատկացվող դրամական աջակցության չափը որոշվում է այդ նպատակի համար ստեղծված հանձնաժողովի եզրակացության առկայությամբ: Ծրագրի բյուջեով գումարներ են նախատեսվել նաև տարբեր բարեգործական կազմակերպությունների կողմից իրականացվող սոցիալական ծրագրեր համաֆինանսավորելու համար: Բյուջեն պլանավորելիս հաշվի է առնվել համայնքի ավագանու կողմից սահմանած չափորոշիչները:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

---

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

**1. Ծրագրի անվանումը**

***«Սոցիալական աջակցության ծառայությունների գործունեության կազմակերպում» (պատվիրակված լիազորություններ)***

**2. Ծրագրի դասիչ**

Բաժին **10**, խումբ **9** , դաս **1**

**3. Ծրագրի իրականացման նպատակը**

Պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին Գյումրի համայնքի սոցիալական աջակցության ծառայությունների տարածքային ստորաբաժանումների գործունեության կազմակերպում համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում:

**7. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է**

Գյումրի համայնքի սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանման միջոցով, սոցիալական ոլորտում պետության կողմից իրականացվող՝պետական և

ընտանեկան նպաստների, միանվագ դրամական օգնության, երեխայի ծննդյան միանվագ նպաստների, զոհված անձանց ընտանեկան նպաստների և այլ ծրագրերի ժամանակին ու հասցեական կատարում:

**5. Ծրագրի բյուջեն՝**

2021 թվականի համար նախատեսվում է ընդամենը **66631.5 հազ. դրամ**

**6. Ծրագրի բացվածքը**

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը (ս4+ս5) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ***Ընդամենը ծախսեր*** | | ***66631.5*** | ***66631.5*** | ***0.0*** |
| -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 59700.6 | 59,700.6 | 0.0 |
| -Էներգետիկ ծառայություններ | 4212 | 4225.9 | 4,225.9 | 0.0 |
| -Կապի ծառայություններ | 4214 | 480.0 | 480.0 | 0.0 |
| -Գույք և սարքավորումների վարձակալություն | 4216 | 1176.0 | 1,176.0 | 0.0 |
| -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 643.4 | 643.4 | 0.0 |
| -Ներքին գործուղումների | 4221 | 405.6 | 405.6 | 0.0 |

**7. Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը**

01.01.2021թ. – 31.12.2021թ.

**8. Տեղեկանք հիմնավորում**

Ծրագիրը համարվում է շարունակական, յուրաքանչյուր բյուջետային տարվա համար, ծրագրի իրականացումը պայմանավորված է պետության կողմից սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերի կարևորությամբ և անհրաժեշտությամբ: Ծախսերը նախատեսված են 2020 թվականի պետական բյուջեի նախագծի հատկացումների շրջանակում, համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված սահմանաչափերի: Աշխատողների թիվը 28 հաստիքային միավոր, դրույքաչափերը համաձայն հաստիքացուցակի:

## V. ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՓԱՍՏԱՑԻ, ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ

(*աղյուսակ 2*)

*աղյուսակ 2*

# 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՓԱՍՏԱՑԻ, ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և ծրագրերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | 2019թ. բյուջեի փաստացի ծախսեր | 2020թ. հաստատված բյուջե | 2020թ. ճշտված բյուջե (հաշվարկային ցուցանիշներ) | 2021թ. Բյուջեի նախագիծ | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Համեմատական 2021թ. բյուջեի և 2019թ. բյուջեի փաստացի ծախսերի | Համեմատական 2021թ. բյուջեի և 2020թ. հաստատված բյուջեի | Համեմատական 2021թ. բյուջեի և 2020թ. ճշտված բյուջեի (հաշվարկային ցուցանիշներ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13=10-7 | 14=10-8 | 15=10-9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 3703290.9 | 3992675.0 | 5341437.4 | 4627820.4 | 4627820.4 | 710850.5 | 924529.5 | 635145.3 | -713617.1 |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 514541.7 | 620110.3 | 741785.5 | 707996.1 | 688743.1 | 19253.0 | 193454.4 | 87885.8 | -33789.4 |
| 2110 | 01 | 1 | 0 | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | | 485557.0 | 504411.9 | 593180.8 | 514496.3 | 505563.3 | 8933.0 | 28939.3 | 10084.5 | -78684.5 |
| | | | | , որից | | | | | | | | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | | 485557.0 | 504411.9 | 593180.8 | 514496.3 | 505563.3 | 8933.0 | 28939.3 | 10084.5 | -78684.5 |
| | | | | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| | | | | *1. Կառավարման մարմնի պահպանում* | | *442055.1* | *504411.9* | *559526.8* | *511556.3* | *505563.3* | *5993.0* | *69501.2* | *7144.5* | *-47970.5* |
| | | | | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 347336.1 | 370449.9 | 367,892.5 | 392981.1 | 392981.1 | 0.0 | 45645.0 | 22531.3 | 25088.6 |
| | | | | -Էներգետիկ ծառայություններ | 4212 | 21036.7 | 30178.4 | 33,015.1 | 22560.1 | 22560.1 | 0.0 | 1523.4 | -7618.3 | -10455.0 |
| | | | | -Կոմունալ ծառայություններ | 4213 | 2741.8 | 4989.0 | 10,124.8 | 7935.8 | 7935.8 | 0.0 | 5194.0 | 2946.8 | -2189.0 |
| | | | | -Կապի ծառայություններ | 4214 | 7970.4 | 8874.0 | 10,489.1 | 8820.0 | 8820.0 | 0.0 | 849.6 | -54.0 | -1669.1 |
| | | | | -Ապահովագրական ծախսեր | 4215 | 581.0 | 880.0 | 880.0 | 1045.0 | 1045.0 | 0.0 | 464.0 | 165.0 | 165.0 |
| | | | | -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 0.0 | 0.0 | 235.0 | 545.0 | 545.0 | 0.0 | 545.0 | 545.0 | 310.0 |
| | | | | -Արտագերատեսչական ծախսեր | 4217 | 10394.0 | 0.0 | 500.0 | 124.0 | 124.0 | | -10270.0 | 124.0 | -376.0 |
| | | | | Ներքին գործուղումների | 4221 | 667.0 | 1550.0 | 1,550.0 | 1250.0 | 1250.0 | 0.0 | 583.0 | -300.0 | -300.0 |
| | | | | -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 4222 | 981.0 | 1800.0 | 1,800.0 | 1200.0 | 1200.0 | 0.0 | 219.0 | -600.0 | -600.0 |
| | | | | -Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 4141.2 | 7400.0 | 7,455.4 | 5355.4 | 5355.4 | 0.0 | 1214.2 | -2044.6 | -2100.0 |
| | | | | -Ներկայացուցչական ծախսեր | 4237 | 13576.2 | 13500.0 | 6,676.1 | 11500.0 | 11500.0 | 0.0 | -2076.2 | -2000.0 | 4823.9 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 4030.0 | 4845.3 | 4,926.3 | 4654.3 | 4654.3 | 0.0 | 624.3 | -191.0 | -272.0 |
| | | | | -Մասնագիտական ծառայություններ | 4241 | 1252.7 | 19337.5 | 19,373.5 | 17360.0 | 17360.0 | 0.0 | 16107.3 | -1977.5 | -2013.5 |
| | | | | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 1036.9 | 1595.0 | 1,095.0 | 3674.0 | 3674.0 | 0.0 | 2637.1 | 2079.0 | 2579.0 |
| | | | | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 1861.2 | 5498.8 | 5,498.8 | 5296.6 | 5296.6 | 0.0 | 3435.4 | -202.2 | -202.2 |
| | | | | -Տրանսպորտային նյութեր | 4264 | 9250.2 | 17220.0 | 21,093.9 | 13440.0 | 13440.0 | 0.0 | 4189.8 | -3780.0 | -7653.9 |
| | | | | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 9055.0 | 6784.0 | 6,591.5 | 6652.0 | 6652.0 | 0.0 | -2403.0 | -132.0 | 60.5 |
| | | | | -Դատարանի ճճարներ | 4823 | 362.1 | 970.0 | 7,520.0 | 1170.0 | 1170.0 | 0.0 | 807.9 | 200.0 | -6350.0 |
| | | | | - Շենք շինությունների ձեռք բերում | 5111 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | -Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 0.0 | 0.0 | 46,750.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | -46750.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | 5781.6 | 8540.0 | 4,559.8 | 5993.0 | 0.0 | 5993.0 | 211.4 | -2547.0 | 1433.2 |
| | | | | Այլ մեքենա սարքավորումներ | 5129 | 0.0 | 0.0 | 1500.0 | 0.0 | 0 | 0.0 | 0.0 | 0.0 | -1500.0 |
| | | | | *2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում* | | 43501.9 | 0.0 | *33654.0* | 2940.0 | *0* | *2940.0* | *-40561.9* | *2940.0* | *-30714.0* |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և ծրագրերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | 2019թ. բյուջեի փաստացի ծախսեր | 2020թ. հաստատված բյուջե | 2020թ. ճշտված բյուջե (հաշվարկային ցուցանիշներ) | 2021թ. Բյուջեի նախագիծ | այդ թվում՝ վարչական մաս | ֆոնդային մաս | Համեմատական 2021թ. բյուջեի և 2019թ. բյուջեի փաստացի ծախսերի | 2021թ. բյուջեի և 2020թ. հաստատված բյուջեի | 2021թ. բյուջեի և 2020թ. ճշտված բյուջեի (հաշվարկային ցուցանիշներ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13=10-7 | 14=10-8 | 15=10-9 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 43501.9 | 0.0 | 33,654.0 | 2940.0 | 0 | 2940.0 | -40561.9 | 2940.0 | -30714.0 |
| **2130** | **01** | **3** | **0** | ***Ընդհանուր բնույթի ծառայություններ*** | | **10423.9** | **11277.5** | **11277.5** | **11277.5** | **11277.5** | **0.0** | **853.6** | **0.0** | **0.0** |
| | | | | , որից | | | | | | | | | | |
| 2131 | 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | | 10423.9 | 11277.5 | 11277.5 | 11277.5 | 11277.5 | 0.0 | 853.6 | 0.0 | 0.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| | | | | ***1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում /պատվիրակված լիազորություններ/*** | | **10423.9** | **11277.5** | ***11277.5*** | **11277.5** | ***11277.5*** | ***0.0*** | ***853.6*** | ***0.0*** | ***0.0*** |
| | | | | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 10036.7 | 10283.5 | 10,283.5 | 10283.5 | 10283.5 | 0.0 | 246.8 | 0.0 | 0.0 |
| | | | | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 0.0 | 203.8 | 203.8 | 203.8 | 203.8 | 0.0 | 203.8 | 0.0 | 0.0 |
| | | | | Կոմունալ ծառայություններ | 4213 | 0.0 | 120.0 | 120.0 | 120.0 | 120.0 | 0.0 | 120.0 | 0.0 | 0.0 |
| | | | | Կապի ծառայություններ | 4214 | 62.0 | 211.1 | 211.1 | 211.1 | 211.1 | 0.0 | 149.1 | 0.0 | 0.0 |
| | | | | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 184.6 | 134.6 | 134.6 | 134.6 | 134.6 | 0.0 | -50.0 | 0.0 | 0.0 |
| | | | | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 140.6 | 324.5 | 324.5 | 324.5 | 324.5 | 0.0 | 183.9 | 0.0 | 0.0 |
| | | | | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| **2150** | **01** | **5** | **0** | ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*** | | **5197.8** | **21318.0** | **32358.9** | **20240.0** | **9920.0** | **10320.0** | **15042.2** | **-1078.0** | **-12118.9** |
| | | | | , որից | | | | | | | | | | |
| | 01 | 5 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | | 5197.8 | 21318.0 | 32358.9 | 20240.0 | 9920.0 | 10320.0 | 15042.2 | -1078.0 | -12118.9 |
| | | | | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| | | | | *1. Հետազոտական և նախագծանախահաշվային աշխատանքներ* | | **5197.8** | **21318.0** | **32358.9** | **20240.0** | **9920.0** | **10320.0** | **15042.2** | **-1078.0** | **-12118.9** |
| | | | | -Մասնագիտական ծառայություններ | 4241 | 1550.9 | 1998.0 | 8,038.9 | 9920.0 | 9920.0 | 0.0 | 8369.1 | 7922.0 | 1881.1 |
| | | | | -Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 3646.9 | 19320.0 | 24,320.0 | 10320.0 | 0.0 | 10320.0 | 6673.1 | -9000.0 | -14000.0 |
| **2160** | **01** | **6** | **0** | ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)*** | | **13363.0** | **83102.9** | **104968.3** | **161982.3** | **161982.3** | **0.0** | **148619.3** | **78879.3** | **57014.0** |
| | | | | , որից | | | | | | | | | | |
| 2161 | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), այդ թվում՝ | | ***13363.0*** | ***83102.9*** | ***104968.3*** | ***161982.3*** | ***161982.3*** | ***0.0*** | ***148619.3*** | ***78879.3*** | ***57014.0*** |
| | | | | ***<<Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, թույլտվությունների ստացման և տեղեկատվության տրամադրման հետ կապված ծառայություններ>>*** | | ***13363.0*** | ***20280.8*** | ***23488.8*** | ***21872.0*** | ***21872.0*** | ***0.0*** | ***8509.0*** | ***1591.2*** | ***-1616.8*** |
| | | | | -Մասնագիտական ծառայություններ | 4241 | 2355.0 | 5360.8 | 5,360.8 | 5427.0 | 5427.0 | 0.0 | 3072.0 | 66.2 | 66.2 |
| | | | | -Պարտադիր վճարներ | 4823 | 11008.0 | 14920.0 | 18,128.0 | 16445.0 | 16445.0 | 0.0 | 5437.0 | 1525.0 | -1683.0 |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և ծրագրերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | 2019թ. բյուջեի փաստացի ծախսեր | 2020թ. հաստատված բյուջե | 2020թ. ճշտված բյուջե (հաշվարկային ցուցանիշներ) | 2021թ. Բյուջեի նախագիծ | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս | Համեմատական 2021թ. բյուջեի և 2019թ. բյուջեի փաստացի ծախսերի | Համեմատական 2021թ. բյուջեի և 2020թ. հաստատված բյուջեի | Համեմատական 2021թ. բյուջեի և 2020թ. ճշտված բյուջեի (հաշվարկային ցուցանիշներ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13=10-7 | 14=10-8 | 15=10-9 |
| | | | | *<<Փոխառությունների և վարկերի սպասարկում>>* | | *0.0* | *62822.1* | *81479.5* | *140110.3* | *140110.3* | *0.0* | *140110.3* | *77288.1* | *58630.8* |
| | | | | - Ներքին վարկի տոկոսավճարներ | 4412 | | 62822.1 | 81,479.5 | 140110.3 | 140110.3 | 0.0 | 140110.3 | 77288.1 | 58630.8 |
| **2200** | **02** | **0** | **0** | **ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2210+2220+տող2230+տող2240+տող2250)** | | **500.0** | **1100.0** | **10600.0** | **3800.0** | **3800.0** | **0.0** | **3300.0** | **2700.0** | **-6800.0** |
| 2251 | 02 | 5 | 1 | *պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)* | | *500.0* | *1100.0* | *10600.0* | *3800.0* | *3800.0* | *0.0* | *3300.0* | *2700.0* | *-6800.0* |
| | | | | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 0.0 | 200.0 | 100.0 | 600.0 | 600.0 | 0.0 | 600.0 | 400.0 | 500.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 0.0 | 0.0 | 2,000.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | -2000.0 |
| | | | | -Տրանսպորտային նյութեր | 4264 | 0.0 | 300.0 | 4,000.0 | 800.0 | 800.0 | 0.0 | 800.0 | 500.0 | -3200.0 |
